նիոյ, որ խնդրէր 'ի նմանէ պատուիրել Արաբացւոց չըպահանջել հարկս 'ի Լատին կրօնաւորացն Երուսաղէմի և յուխտաւորաց նոցին :

Կարևոր համարիմ յառաջ բերել աստանօր զկցկտուր և զսուտակասպաս բանս Վրացի Պատմագրաց Վախուշիթի և Տիմոթէոս կոչեցելոյ, որ յածին ցարդ 'ի բերանս Յոյն ռամկաց : Արդ ասէ՝ 'ի պատերազմին Օսմանցւոց ընդ Պարսս, Ֆրանկք արշաւեցին 'ի սահմանս տէրութեան նոցին : Սէլիմ առաքեաց դեսպանս առ Գէորգ թագաւորն Վրաց նորոգել զդաշինն, խոստացեալ տալ նմա զԵրուսաղէմ, և զՏնօրինական տեղիս, և զԽաչավանքն, այլովքն հանդերձ. երկուցեալ Սուլթանին մի գուցէ միաբանեսցին Վիրք ընդ Պարսս ընդդէմ իւր : Եւ թագաւորն եկեալ իցէ ընդ իշխանս իւր յԵրուսաղէմ : (Թերևս 'ի ժամանակս Հուլավու խանին Թաթարաց) : Սակայն Յոյն պատմիչն յաւելու թէ՝ զայսմանէ չյիշէ ինչ 'ի Պատմութեան իւրում Տոսիթէոս Յոյն Պատրիարքն, զի յայնժամ Յոյնք էին 'ի մեծի նեղութեան : Եւ թէ Վրացիք ունէին յԵրուսաղէմ զվեց վանորայս, յորոց զերկուսն՝ զՍ. Թեկղի (վանք Հապեշաց). և զՍ. Յովհաննէս՝ ('ի ձեռս խաչակրաց). ետուն Յունաց, և զվանս Յովհաննու աւետարանչին՝ Լատինաց : Իսկ Տիմոթէոսն ասէ, թէ թագաւորն Վրաց 2 Իշխանօք տիրեալ իցէ Երուսաղէմի և սահմանաց նորա ամս 18 (որ է բոլորովին սուտ). և եթէ Լևոն իշխան Կախեթի 'ի դարձին իւրում 'ի հայրենիս՝ առաքեալ իցէ զբազում ընծայս եկեղեցեաց 'ի ձեռն Յովակիմայ տեսչի Խաչավանաց, և թէ՝ նորոգեալ իցէ զՍ. Յարութիւն՝ և զԳողգոթայ զարդարեալ մարմարիոն սալիւք, և Տիմոթէոսն այն տեսեալ իցէ զարձանագիր նորոգութեան, թէ թագաւորն Վրաց նորոգեաց զեկեղեցին Քրիստոսի, յետ աւերելոյ զայն Թաթարաց. 'ի ձեռն Յովակիմայ եպիսկոպոսի տեսչի Խաչավանաց, և այլ այնպիսի բանք չաղակրատանաց, որք են 'ի կարգի առասպելաց և ստութեանց, որ ցարդ յածին 'ի բերանս կրօնամոլ և ադէտ Յոյն կղերին, որոց հետեւեալ են և ռամիկք նոցին. և չունի պէտս հերքելոյ, զի Պատմութիւնն ինքնին ցուցանէ զվրիպակս ժամանակագրութեան :